## ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ.

ՍՊԱՐՏԱԿ. *պատմական վէպ, համառօտ. Սամոյլովա. Թարգմ. Սիմ. Հովուեանի. Հրատ. Բ. Պ. Ա. Բագու* 1896, *Տպ. Արօր. եր.* 100. *Գինն է* 35 *կոպէկ.*

*Հռովմէական հասարակապետութեան վերջին օրերի նշանաւոր իրողութիւններից մէկն էր ստրուկների ապստամբութիւնը Սպարտակոսի առաջնորդութեամբ. ահա այդ պատմութիւնն է, որ այստեղ կէս վիպական և կէս պատմական ձևով տպուած է. Այսպիսի գրքերն շատ օգտակար են դպրոցականների համար. Թէ որտեղից է համառօտել Սամոյլովան մեզ չէ ասում թարգմանողն. Թարգմանութեան լեզուն լաւ է և տարբերւում է մեր գրական հրապարակը ողողող համրակ թարգմանիչների լեզուից.*

ՔԱՄԱԼԵԱՆ Ս. *Երկասիրութիւններ, կապուկ առաջին, Թիֆլիզ* 1896, *տպ. Մարտ. և Ընկ.* 166 *երես. գինն է* 50 *կոպէկ.*

*Տասն և երկու հատուած, մին ոտանաւոր, միւսները արձակ կազմում են այս* կ ա պ ո ւ կ ը *(հատորը), որ «Արձագանքի» մէջ հրատարակուելուց յետոյ ժողովել է և լոյս է ընծայել պ. Ս. Ք. իբրև մի առանձին հատոր. Ժողովրդի ստեղծագործութիւն, ժողովրդի կեանք, միտք ու խոհեր ժողովրդական զգեստով, ահա պ. Ք. Ս-ի երկասիրութիւնների այս կապուկի բնորոշումն. Ժողովրդական ստեղծագործութիւններն հաւաքել, ականջ դնել ժողովրդի ասածին, զգացածին ու մտածածին, գրի առնել այդ ամէնն ու ընտրութեամբ գրական սեղանի վրայ դնելն մի արժանիք է, որ ամէն մէկին յատուկ չէ. այս մասին պ. Ք. Ս. ցոյց է տուել արդէն իւր ձեռնհասութիւնն և առանց տիտղոսի ձգտելու դարձել է մի բուն ժողովրդական գրող. այս ժողովածուն ենթադրել է տալիս մի աւելի հարուստ գանձարան, որի բանալին պ. Ք. Ս-ի ձեռքն է. Յոյս ունենք որ նա դեռ շատ այսպիսի կապուկներ և փնջեր պիտի պարգևէ մեզ. Մեր պատանեկական և ժողովրդական գրադարանների համար այս երկասիրութիւնների հատորը մի գեղեցիկ ընծայ է.*

*Ն. Ք.*

## ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ.

ԼՈՒՄԱՅ, *Գրական հանդէս. առաջին տարի, գիրք Բ.* 1896. *յունիս.*

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆԸ.

*Սանիկ, վէպ. Ս. Կ.*
*Կիլիկիա. Բակ.*
*Աղթամար. Ա. Թաշճեան.*
*Լրտես օրիորդ. անգղ. թարգմ. Կ.*
*Խաչատուր Աբովեան. Ն. Տէր—Կարապետեան.*
*Երկու ամիս Աղուանից և Սիւնեաց աշխարհներում. Րաֆֆի.*
*Կապ բռնողը. Ս. Աւետիքեան.*
*Անժամանակ թատրոն և ընթերցանութիւն. գերմ. թարգմ. Ս. Մանդինեան.*
*Նորմուծութիւններ Հայաստանեայց եկեղեցում. Գիւտ քահ. Աղանեանց.*

ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

*Դրանսիլվանիոյ հայոց մետրոպոլիտը. Հ. Գր. Գովրիկեանի—Ց. Ճաղարբէգեան.*

ՊԱՏՄԱԿԱՆ

*Ղազարայ Փարպեցւոյ պատմութեան Հայոց յառաջաբան. Ն. Բիւզանդացի.*
*Նիւթեր դպրոցական պատմութեան համար.*
*Երկու հատուած մեր հին մատենագրութիւնից.*
*Ս. Նազարեանի նամակներ.*

ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

*Յ ա ւ ե լ ո ւ ա ծ — Լինհարդ և Գերտրուդ, Պեստալոցցու. գերմ. թարգմ. Իս. Յարութիւնեանց.*

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԲՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ *Համառօտ դասընթաց բնական գիտութեանց* 57 *պատկերով. (կենդանաբանութիւն, հան[illegible]բանութիւն և բուսաբանութիւն). Աշխատ. Ջ. Գրիգորեանց. Թիֆլիս* 1896.